ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՄՇԱԿ-ՊԾ-21/1

Ք. Երևան «15» փետրվարի 2021թ.

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Է. Սեհինյանի, որը գործում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Շնորհատու», մի կողմից և «Հայանտառ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Պ. Յուգունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Շնորհառու», մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ «Անտառապահպանական ծառայություններ » միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Շնորհառուին հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ «Անտառապահպանական ծառայություններ» ծրագրով **1 335 485 900 (մեկ միլիարդ երեք հարյուր երեսունհինգ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ,** իսկ Շնորհառուն Ծրագիրը պարտավորվում է իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված Շնորհառուի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N1 հավելվածով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Շնորհատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Շնորհառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Ծրագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, Շնորհառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Շնորհառուն ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Շնորհառուն երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Շնորհառուն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Շնորհատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Շնորհատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Շնորհատուն պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Շնորհառուին.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ (հաշվետվությունների ընդունում)՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Շնորհառուն պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Շնորհատուի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Շնորհատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Շնորհատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն.

2.4.4.1. Հավելված N 2-ով հաստատված ոչ ֆինանսական /արդյունքային/ ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսակային հաշվետվությունները ներկայացնել մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն համաձայն Հավելված N 6-ի.

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը՝ համաձայն սույն պայմանագրի N5 հավելվածի, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Շնորհատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 Շնորհատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Շնորհառուն պարտավորվում է անվճար՝ Շնորհատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.8. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները Շնորհատուի կողմից ընդունվելուց հետո՝ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.9. Սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1. Շնորհատուն Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ (հաշվետվությունների ընդունում):

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Շնորհատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շնորհառուին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Շնորհատուն ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շնորհառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի կատարման համար Շնորհառուին, որպես դրամաշնորհ վճարել **1 335 485 900 (մեկ միլիարդ երեք հարյուր երեսունհինգ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ՝** սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 3 հավելվածին համապատասխան: Ծրագրի գնից 160 258 400 (հարյուր վաթսուն միլիոն երկու հարյուր հիսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամը Շնորհատուն փոխանցում է Շնորհառուի հաշվին, որպես կանխավճար՝ Պայմանագրի կնքումից հետո 10 օրյա ժամկետում:

4.2. Հաշվետու ամսվա փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ՝ Համաձայն N 4 հավելվածի, Շնորհառուի կողմից ներկայացված հաշվետվություններն ընդունելուց հետո Շնորհատուն հաջորդող ամսվա վճարման ենթակա գումարը, որպես կանխավաճար վճարում է Շնորհառուին՝ հաշվետվություններն ընդունելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Եռամսյակի ավարտից հետո Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուի կողմից սահմանված ժամկետներում ներկայացնել բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն՝ համաձայն N 4 Հավելվածի և ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն Հավելված N 5-ի՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 2 Հավելվածով հաստատված ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշներին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Շնորհառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Շնորհատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Շնորհառուին վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց

հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կազմված է 2 օրինակից, 10 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, 4 և 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՇՆՈՐՀԱՏՈՒ	ՇՆՈՐՀԱՌՈՒ
ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտե	«Հայանտառ» ՊՈԱԿ
ք. Երևան, Ա. Արմենակյան 129	ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011020410	Հ/Հ 900018002270
ՀՎՀՀ 00476409	ՀՎՀՀ 02512343
Է. ՍԵՒՆՅԱՆ _____	Դ. ՅՈՒԳՈՒՆՅԱՆ _____
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված 1
2021 թվականի փետրվարի --------- -ին կնքված
N --------- պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	Անտառպահպանական ծառայություններ	ՀՀ անտառային տարածքների պահպանության աշխատանքների կատարման ապահովում: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների իրականացման համար ֆինանսական աջակցության տրամադրում:	«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրինությանը հանձնված հանրապետության անտառային հողերի տարածքը կազմում է 342,4 հազար հա, որտեղ անտառտնտեսվարում իրականանելու համար գործում են կազմակերպության անտառտնտեսություն մասնաճյուղերը, որոնք բաժանված են անտառպետությունների և պահաբաժինների, որոնց պահպանությունն իրականացնում են անտառապետերը և անտառապահները: Անտառպահպանության աշխատանքներում ներգրավված են անտառտնտեսություն մասնաճյուղերի տնօրենները, ավագ անտառապետերը, տնօրենի պահպանության գծով տեղակալները, անտառպահպանության ինժեներները, անտառկուլտուրաների ինժեներները և այլոք:	Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ունենալ 342,4 հազար հա ապօրինի հատումներից, արածեցումներից, հողազավթումներից, հրդեհներից պահպանված անտառային տարածքներ: Գնահատման չափանիշներն են ՝ապօրինի հատումների և այլ ապօրինությունների արձանագրումը և դրանց շտկումը:	31.12.2021	1 335 485 900
Ընդամենը						1 335 485 900

ՇՆՈՐՀԱՏՈՒ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտե
ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011020410
ՀՎՀՀ 00476409

Է. ՍԵՐՆՅԱՆ _____
Կ. Տ.

ՇՆՈՐՀԱՌՈՒ

«Հայանտառ» ՊՈԱԿ
ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900018002270
ՀՎՀՀ 02512343

Պ. ՑՈՒԳՈՒՆՅԱՆ _____
Կ. Տ.

Հավելված 2
2021 թվականի _____ _____ -ին կնքված
N _____ պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը **Հայանտառ ՊՈԱԿ**
Ծրագրի անվանումը **Անտառների կառավարում**

Միջոցառման անվանումը	Ցուցանիշը	Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ընթացքում, ընդ որում՝ աճողական			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինը ամիս	Տարի
1	2	3	4	5	6
Անտառպահպանական ծառայություններ	Կառավարվող անտառային տարածքներ, հազ.հա	342.4	342.4	342.4	342.4
	Մթերված թափուկի ծավալը, պահեստային խմ	0	10000	30000	60000
	Անտառտնտեսությունների մասնաճյուղերում վերապատրաստման միջոցառումների թիվը, հատ	0	1	3	4
	Դրամաշնորհային պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման մակարդակը, տոկոս	0	0	0	100

ՇՆՈՐՀԱՏՈՒ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության
անտառային կոմիտե
ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011020410
ՀՎՀՀ 00476409

Է. ՍԵՒՆՅԱՆ

Կ. Տ.

ՇՆՈՐՀԱՌՈՒ

«Հայանտառ» ՊՈԱԿ

ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900018002270
ՀՎՀՀ 02512343

Պ. ՑՈՒԳՈՒՆՅԱՆ _____

Կ. Տ.

Հավելված 3
2021 թվականի փետրվարի _____ -ին կնքված
N _____ պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը՝ **«Հայանտառ» ՊՈԱԿ**

2. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Բաժին	Խումբ	Դաս
04	02	02

3.Հիմնարկին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ **ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**

4.Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի հաշիվների համարը՝ **900011020410**

Ծրագրի անվանումը՝ **Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ**

(հազար դրամ)

Ձեռք բերվող ապրանքի,աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին՝ աճողական												
		առաջին եռամսյակ			առաջին կիսամյակ			ինն ամիս			տարի			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Անտառպահպանական ծառայություններ	4637		160,258.4	240,387.5	351,678.0	462,968.5	574,258.9	685,549.4	796,839.9	908,130.4	1,050,582.2	1,193,034.0	1,335,485.9	1,335,485.9
ԸՆԴԱՄԵՆԸ		0.0	160,258.4	240,387.5	351,678.0	462,968.5	574,258.9	685,549.4	796,839.9	908,130.4	1,050,582.2	1,193,034.0	1,335,485.9	1,335,485.9

ՇՆՈՐՀԱՏՈՒ
ՀՀ շրջակա միջավայրի նախարարության
անտառային կոմիտե
ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011020410
ՀՎՀՀ 00476409
Է. ՍԵՌՆՅԱՆ _____

Կ.Տ.

ՇՆՈՐՀԱՎՈՐ
«Հայանտառ» ՊՈԱԿ

ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900018002270
ՀՎՀՀ 02512343
Պ. ՑՈՒԳՈՒՆՅԱՆ _____

Կ.Տ.

Հավելված 4
2021 թվականի _____ _____ -ին կնքված
N _____ պայմանագրի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

01.01.20____թ. --___. ___.20____թ. ժամանակահատվածի համար

1. Ծրագրի պատասխանատու մարմնի	Անվանումը՝	
	Դասիչը՝	
2. Միջոցառումը կատարող մարմնի	Անվանումը՝	
	Դասիչը՝	
3.Հիմնարկի անվանումը՝		
4. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը՝		
5. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝		
6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման	Բաժին N	
	Խումբ N	
	Դաս N	
7. Ծրագրային դասակարգման	Ծրագրի անվանումը	
	Ծրագրի դասիչ	
	Միջոցառման անվանումը	
	Միջոցառման դասիչ	
8. Ֆինանսական ցուցանիշների չափման միավորը՝		

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի		Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Փոփոխություններ տարեկան նախահաշվում			Տարեկան ճշտված նախահաշիվ	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Վճարման ենթակա սակայն չիրականացված		Դրամարկղի մնացորդ
	անվանումները	NN		ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում	ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում)	Վերադասի կողմից					Ընդամենը	Որոնցից 30 օրից անց պարտքեր	
Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը=Դ+Ե+Զ+Է	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ		ԺԴ
1100000	Ընթացիկ ծախսեր	X											
	այդ թվում՝												
1150000	Դրամաշնորհներ												
	այդ թվում՝												
1154600	Այլ կապիտալ դրամաշնորհներ	4657											
1000000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	X											

___ _____ *20__ թ.*

Կ. Տ.

Առաջին կարգի ստորագրություն _____ _____
(ստորագրություն) (Ա. Հ.Ա.)

Երկրորդ կարգի ստորագրություն _____ _____
(ստորագրություն) (Ա. Հ.Ա.)

Հավելված 5 .
2021 թվականի _____ _____ -ին կնքված
N _____ պայմանագրի

Օրինակելի ձև Հ-8

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

01.01.20____թ. --___. ___.20____թ. ժամանակահատվածի համար

1. Ծրագրի պատասխանատու մարմնի	Անվանումը՝	
	Դասիչը՝	
2. Միջոցառումը կատարող մարմնի	Անվանումը՝	
	Դասիչը՝	
3.Հիմնարկի անվանումը՝		
4. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը՝		
5. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝		
6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման	Բաժին N	
	Խումբ N	
	Դաս N	
7. Ծրագրային դասակարգման	Ծրագրի անվանումը	
	Ծրագրի դասիչ	
	Միջոցառման անվանումը	
	Միջոցառման դասիչ	
8. Ֆինանսական ցուցանիշների չափման միավորը՝		

		Տարեկան պլանային ցուցանիշը		Հաշվետու		Փաստացի ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածի պլանային (ճշտված) և փաստացի	Տարբերության պատճառը
Ծրագրի դասիչը		Տարեսկզբին հաստատված	Ճշտված	Տարեսկզբին հաստատված	Ճշտված			
Միջոցառման դասիչը՝		1	2	3	4	5	6	7
Միջոցառման անվանումը՝		x	x	x		x	x	x
Միջոցառման նկարագրությունը՝		x	x	x		x	x	x
Միջոցառման տեսակը		x	x	x	x	x	x	x
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝		x	x	x		x	x	x
Արդյունքի չափորոշիչներ								
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)								

____ _____ *20__թ.* Առաջին կարգի ստորագրություն _____ _____

Կ. Տ. ստորագրություն (Ա. Հ.Ա.)

Երկրորդ կարգի ստորագրություն _____ _____

ստորագրություն (Ա. Հ.Ա.)